Արձանագրություն N 3

ՀԾԿՀ-16/2-ՇՀԾՁԲ-15/2 ծածկագրով էլեկտրոնային ձևով շրջանակային համաձայնագրերի միջոցով ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

13 սեպտեմբերի 2016թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Սմբատ Աղաբայանը, Մեսրոպ Ղարիբյանը, Ջուլիետա Գրիգորյանը, քարտուղար՝ Երջանի Գևորգյանը:

Օրակարգ

Հայտերի գնահատման մասին

ՀԾԿՀ-16/2-ՇՀԾՁԲ-15/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ սահմանված ժամկետում «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները (կցվում է):

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտերում, առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց՝

- **«Ավիատուր Գրուպ ՍՊԸ-ին»**
  - 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին չափաբաժնի մասով:
  - 3-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 3-րդ չափաբաժնի մասով:
  - մերժել 2-րդ չափաբաժնի մասով՝ գինը նախահաշվային արժեքը գերազանցելու հիմքով պայմանավորված:
- **«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ին՝**
  - 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:
  - մերժել 1-ին չափաբաժնի մասով՝ գինը նախահաշվային արժեքը գերազանցելու հիմքով պայմանավորված:
- **«Տրինիդատ» ՍՊԸ-ին՝**
  - 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով:
  - մերժել 1-ին չափաբաժնի մասով՝ գինը նախահաշվային արժեքը գերազանցելու հիմքով պայմանավորված:

Հանձնաժողովը որոշեց սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թ. սեպտեմբերի 19-ին ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Սմբատ Աղաբայան
	_____	Մեսրոպ Ղարիբյան
	_____	Նունե Գաբրիելյան
քարտուղար	_____	Երջանիկ Գևորգյան